
ԼԱՏԻՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Հայերենը, հունարենը և լատիներենը, ինչպես գիտենք, հնդեվրոպական ցեղակցության լեզուներ են: Ծագելով մեկ ընդհանուր աղբյուրից (հ.-ե. նախալեզու՝ հնիւ.)՝ իրենց պատմական ինքնուրույն զարգացման և առանձին դեպքերում նկատվող շփումների ընթացքում դրանք ձեռք են բերել որոշակի յուրահատկություններ՝ բոլոր դեպքերում պահպանելով հնդեվրոպական ակնհայտ ընդհանրություններ: Ցեղակից այդ լեզուները քերականորեն այնքան են միմյանցից հեռացած, որ մի կողմից՝ հունական դպրոցի նորամուծությունները հին գրական հայերենի համար խորթություն են՝ «հունարանություններ», մյուս կողմից (հետագայում)՝ լատինաբան դպրոցի նորամուծությունները գրաբարի համար ևս որակվում են որպես խորթություն՝ «լատինարանություններ»: Որքան էլ, օրինակ, հեղինակները փորձում են հայերենը «ձևել» ըստ լատիներենի, դա լրիվ ու լիարժեք չի ստացվում: Այսպես, գոյականների սեռը, որ առկա է լատիներենում, ոչ մի կերպ չի ձևակերպվում հայերենում, որքան էլ փորձերը շատ են լինում, ըստ որում՝ խիստ բազմազան (օրինակ՝ իգական սեռի ձևացումը - ունի մասնիկով): Քերականական անջրպետն այնքան է մեծացած լինում, որ ցեղակից երկու լեզուների (լատիներենի և հայերենի) միջև անգամ «ձևական» ընդհանրությունը, էլ ուր մնաց նույնական սահմանները, դառնում են ոչ ամբողջական, անհամապարփակ:

Տարբերակիչ հատկանիշը լեզվական այն առանձնահատկությունն է, որով բնութագրվում է տվյալ լեզվի (եթե ոչ՝ լեզուների), մեկ լեզվի ներսում՝ բարբառների և այլն, որն է իրողություն: Այն կարող է առանձնացվել ոչ միայն լեզվի համաժամանակյա կտրվածքի հարաբերությամբ, այլև նրա պատմության տարբեր փուլերում տեղի ունեցած փոփոխությունների առնչությամբ: Տարբերակիչ հատկանիշներն առհասարակ բնորոշ են լեզվին և կազմում են նրա, այսպես կոչված, առաջատար, «շարժիչ» ուժը:

Մակայն լեզվի ուսումնասիրությունն ըստ տարբերակիչ հատկանիշների, առաջ է քաշվում բավականին ուշ, հիմնականում կառուցվածքային լեզվաբանության մեջ: Այդպիսի ուսումնասիրության է առնված, օրինակ, լեզուների հնչույթային համակարգը՝ ընդհանուր լեզվաբանական հայեցակետից¹:

¹ Հնմտ. Р. Я ко б с о н, Г. М. Ф а н т и М. Ха п п е. Введение в анализ речи: Различительные признаки и их корреляты. - Новое в лингвистике, вып. 2. М., 1962, с. 173-230; М. С. Гу р ы ч е в а, Н. А. Ка т а г о н щ и н а. Сравнительно-сопоставительная грамматика романских языков (галло-романская подгруппа). М., 1964, с. 22-27. Տե՛ս նաև է. Ա դ ա յ ա ն. Գրաբարի քերականություն, հ. 1, Երևան, 1964:

Այս առումով մեզանում խիստ ուշագրավ է հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգումը, որը ոչ միայն կոնկրետ ձեռքբերում է հայ բարբառագիտական ուսումնասիրության բնագավառում, այլև տեսական նոր հնարավորություն է ստեղծում ըստ այդմ հետազոտելու հայերենն իր տարբեր կողմերով և զարգացման պատմության առանձին փուլերի հարաբերությամբ²:

Հայոց լեզուն աչքի է ընկնում ոչ միայն գրական և բարբառային (=խոսակցական) տարբերակվածությամբ, այլև գրական լեզվի երկփեղկվածությամբ՝ զարգացման նոր փուլում, ինչպես նաև ներկայացնում է պատմականորեն գոյացած գրական լեզվի առնվազն երեք տարբերակներ (հին, միջին, նոր): Դրանից բացի, գրեթե ամեն մի գրական տարբերակ խստորեն առանձնանում է իր հասարակական-մշակութային տարբերակվածությամբ: Այսպես, հին գրական հայերենի ներսում կարելի է խոսել «հայկաբան», ասորաբան և հունաբան տարբերակների մասին, միջին հայերենի շրջանում՝ միջին (բուն) գրական, միջին շրջանում գործող գրաբար և ձևավորվող հունա-լատինաբան ու լատինաբան տարբերակների մասին և այլն: Ըստ որում միջին հայերենի շրջանում սկզբնավորվող լատինաբան տարբերակը հասնում է մինչև XVIII դ. առաջին կեսը, որտեղ այն հետզհետե գիտակցական մոտեցումով կասեցվում է և հաղթահարվում: Ուստի և՛ հայերենում գործառող լատինաբան տարբերակը, որ սկիզբ է առնում XIV դ. սկզբներից, գործառության տարբեր փուլերում ի հայտ է գալիս տարբեր ինտենսիվությամբ և արտաքին միջամտության պայմաններում հաղթահարվում է ու փոխարինվում «հայկաբան» տարբերակով, հունի մեջ է դրվում ըստ հայերենի բնականոն վիճակի (= տարբերակի):

Բոլոր այն հայագետները, ընդ որում հայերենագետները, ովքեր այս կամ այն չափով անդրադարձել են լատինաբան հայերենին, փոքրիշատե նշել են լեզվական այդ տարբերակին բնորոշ հատկանիշների մասին: Այդ գործում մեծ է հատկապես Հ. Աճառյանի դերը: Հենվելով Հովհ. Կոստանդնուպոլսեցու քերականական աշխատության տվյալների վրա՝ մեծավաստակ հայագետը մեկառմեկ թվարկումով բերում է լատինաբան հայերենի լեզվական առանձնահատկությունները, որոնք, մեր կարծիքով, խիստ էական են, սակայն ամեննին էլ ոչ լրիվ ու ամբողջական:

Ստորև մեր կողմից առանձնացվող տարբերակիչ հատկանիշներն ամբողջապես բնութագրում են լատինաբան հայերենի համակարգը՝ ընդգրկելով հնչույթաբանական երևույթները, բառապաշարի իրողությունները, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները:

Միանգամայն ընդունելի է այն ձևակերպումը, ըստ որի լատինաբան հատկանիշներն ըստ էության այլ բան չեն, քան՝ ա) հեռացում, այսպես կոչված, «հայկաբան» հայերենից և բ) մոտեցում լատիներենին: Ըստ այդ ձևակերպման ստացվում է այնպես, որ այդ հեռացումը մի կողմից՝ ոչ թե հայերենի ներքին, բնականոն զարգացման «ինքնօտարում» էր, այլ արհեստական հեռացում՝ օտարացում, մյուս կողմից՝ մոտեցումն էլ այլ բան չէր, քան անտարորոշ լեզվի

² Տե՛ս Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

(որակապես «չտարբերակված լատիներենի», ասենք՝ իբրև ընդօրինակման նմուշ վերջինիս ո՞ր տարբերակն էր ընտրվում՝ դասակա՞նք, հետդասակա՞նք) տարօրինակ ընդօրինակում³: Հետաքրքիր է նաև այն իրողությունը, որ թեև առաջին ենթաշրջանում լատինաբան գործունեությունն ունենում է բուռն զարգացում, այնուամենայնիվ լատինաբան հայերենը համեմատաբար ավելի քիչ է կրում «խաթարումներ», քան հետագայում: Ի թիվս այլ հանգամանքների՝ դա պայմանավորված է այն բանով, որ սկզբնապես, հատկապես թարգմանությունների հարցում, միարարներին զուգակցում էին լուսավորչադավան կրոնավոր գործիչները: Այսպես, հայտնի է, որ լատիներենից հայերեն թարգմանություն անելիս Հովհաննես Երզնկացին (Օործորեցին) օգնում էր, աջակցում էր Բարդուղիմեոսին, օրինակ, Թովմա Աքվինացու «Եօթն խորհրդոց» գրքի դեպքում⁴: Նման գործակցումը, ինչ խոսք, բարեպետ էր ազդելու տվյալ փուլում հայերենի անադարտությանը հավատարիմ մնալու, լատինաբան և ժամանակի խոսակցական ձևերից խուսափելու հարցում, որը խախտվում է հետագայում:

Հովհաննես Քոնեցու «Յաղագս քերականին» աշխատության մեջ, որը լատինաբան հայերենի քերականական կառուցվածքի յուրօրինակ նկարագրություն է, քերականական մի շարք երևույթների վերլուծության մեջ հանդես է բերվում ոչ միայն ինքնուրույն մոտեցում, այլև որոշ դեպքերում (օրինակ՝ անունների սեռանիշ մասնիկների առանձնացման, դերանվան բնութագրման ու դասակարգման, բայի խոնարհման հետ կապված երևույթների բնորոշման հարցերում և այլն) տեղ է տրվում համեմատաբար մոտ կանգնած նախորդ քերականներից հատկապես երկուսի՝ Հովհաննես Երզնկացու (Պլուզ) և Հովհաննես Երզնկացու (Օործորեցու) այս կամ այն մոտեցմանը⁵:

Մի քանի խոսք տարբերակիչ հատկանիշների ընտրության մասին:

Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշներն առանձնացնում ենք՝ նկատի առնելով՝ 1) նախկինում տարբեր առիթներով հայազեսների կողմից նշված առանձնահատկությունները, 2) Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» (մաս 2, Երևան, 1951, էջ 313–323) գրքում շարադրանքի ձևով բերվող տարբերությունները, 3) լատինաբան հայերենի հատկություններ պարունակող կարևորագույն քերականությունների համապատասխան տվյալները, 4) լատինաբան հայերենով ավանդված գրավոր աղբյուրների տարբեր կարգի լեզվական երևույթների կիրառությունները, 5) լատինաբան նորաստեղծությունների հատկահարումը (ըստ որում՝ օգտագործելով այդ խնդրին նվիրված մեր ուսումնասիրությունների արդյունքները):

³ Տե՛ս «Եվրոպա», 1848, № 14, էջ 16:

⁴ Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 560: Հմմտ. «Բազմավեպ», 1911, էջ 440: Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. Խաղբակյանք կամ Պոռոջանք հայոց պատմության մեջ, II հրատ., Անթիլիաս, 1969, էջ 284:

⁵ Յ ո վ հ ա ն ն է տ Ք ո ն ե ց ի. Յաղագս քերականին, բնագիրը հրատարակության պատրաստեց Լ. Ս. Խաչիկյանը, ներածությունը Լ. Ս. Խաչիկյանի և Ս. Ա. Ավագյանի, Երևան, 1977, էջ 69–72, 79, 85–86 և այլն:

ա) Հնչյունական հատկանիշներ. – Մրանք համեմատաբար քիչ են, ընդգրկում են սահմանափակ դեպքեր ու փաստեր, երևան են գայիս գործառական ոչ հավասար պայմաններում, գործում են տարբեր ժամանակներում:

1. Ռնգային ն-ին նախորդող ո-ի պահպանում նաև մյուս դեպքերում. ընթեռնում ~ ընթեռցայ, ընթեռցալ, ընթեռցեալ (ՖՌՔ), ձեռն ~ ձեռքածութիւն (ՅՊՁ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 20, 23:

2. Հայերեն այբուբենի 34-րդ տառի՝ լ-ի («լյուն, հյուն») հնչյունական արժեքավորում իբրև ու (թերևս հին գրականում եղածի վերականգնում) հատկապես իւ երկբարբառի կազմում (ՖՌՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 14:

3. Պայթական ձայնեղ դ-ի դիմաց շնչեղ խուլ թ-ի գործածություն իբրև խոսակցականի ազդեցության արդյունք (ՖՌՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 12:

4. Հնչյունական ոյ ~ ու հակադրության գործադրում իբրև ձևակազմական տարբերակիչ հատկանիշ, այն է՝ ոյ-ով սահմանական եղանակի կրավորաձև անցյալ անկատարի, իսկ ու-ն՝ նույնի ներգործաձևի կազմում (ԿԳՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 53:

5. Հոգնակերտ ք-ի վերածում գ-ի՝ եզակի թվի իմաստի դրսևորման դեպքում հոգնակիակերտ իկ մասնիկի վերածում իք մասնիկի կամ պարզապես ք-ի ավելացում իկ մասնիկին. գիրք ~ գիրգ (ԳՄԱ, I), այլև՝ Աղուեսագիրգ (ԳՄԱ, II, 3), մարդ ~ մարդիք (փիւ. մարդիկ) (ՅՔՔ, 70, ԴԶՔ, 84, այլև մարդիկք): Հմմտ. «Բազմավեպ», 1873, 1, էջ 322:

6. Վանկարար նախահավելվածի (augmentum syllabicum) միասնականացում է-ի գործածության բոլոր դեպքերում (փիւ. բաղաձայնից առաջ է, իսկ ձայնավորից առաջ է) (ՖՌՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 20:

7. Հայերեն այբուբենի մեջ ներմուծված օ և ֆ գրերի «օրինականացում» (համապատասխանաբար ու-ի և փ-ի գոյությունը իբրև «անմտության արդյունք») (ՖՌՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 27:

8. Հայերենի այբուբենի մեջ և, ու գրերի օրինականացում՝ գրերի ընդհանուր քանակը հասցնելով 40-ի. «Տառք հայկազունք են քառասուն, և են այսոքիկ՝ ա, բ, գ, այլև լ, փ, ք, և, օ, ֆ, ու» (ՅՀՔ, 120): Հմմտ. Ջահուկյան, 1974, 92:

9. Զուգակցված դ-երի պարզեցում. ընդդեմ ~ ընդեմ (ՅՀՔ, 114, ՄՖՄԱ, 1):

10. Ձևակազմական փոփոխության մեջ օ ~ ո հնչյունափոխության հաստատում, օ-ով ձևը ուղղականի, իսկ ո-ով ձևը մյուս թեք ձևերի «հիմքին» հատկացնելով. սիրօղ ~ սիրողի (ՖՌՔ, ԿԳՔ): Այլև՝ ուսուցանօղ (docens) ~ ուսուցանողի (docentis), ընթերցօղ (legens) ~ ընթերցողի (legentis) (ՅՀՔ, 8, 114, IGA, 8): Հմմտ. Աճառյան, 1951, 312, Ջահուկյան, 1974, 28:

11. Օտար բառի հայերեն տառադարձության անհատակություն, անմիակերպություն. «այլ ազգի անվանց գրության մեջ ամենն ալ իրարմե տարբեր ձամբա բռներ են. հասարակորեն գրածնին՝ կես մը տառադարձությամբ, կես մը անանց տառադարձության» («Եվրոպա», 1848, 14, էջ 16):

բ) Բառային հատկանիշներ. – Մրանք գերակշիռ մասով առանձնացվում են համապատասխան գրական հուշարձանների ընձեռած լեզվական տվյալների հիման վրա, քանի որ, ինչպես գիտենք, բառապաշարի հարցերը հայերենի բո-

լոր կարգի քերականություններում ամենանվազ ուշադրության առարկա են եղել: Դրա հետևանքով, բնականաբար, շատ սակավ, գրեթե աննշան է «լատինարան բառի» բաղադրության (կառուցվածքի) մասին համապատասխան քերականությունների պարունակած տվյալները: Այս դեպքում հատկանիշների առանձնացումը կատարվում է բառակազմության և բառագործածության «տարօրինակության» (լատինարանության) ընթացիկ սկզբունքների օգնությամբ: Այդ սկզբունքներն այստեղ առանձնացվում են գրավոր աղբյուրների փաստերի հիման վրա: Առհասարակ բառապաշարի հետազոտությունը միայն վերջին ժամանակներս է դարձել առանձին ուշադրության առարկա: Ուստի լատինարան հայերենի բառային հատկանիշների առանձնացումը հիմնականում կատարվում է ըստ նորագույն ուսումնասիրությունների՝ հատկապես հայերենի բառակազմության և բառային իմաստաբանության առնչությամբ: Ամենից առաջ առանձնացնելի են հետևյալ հատկանիշները:

12. Նախածանցի անհարկի գործածություն. համախոսկումն (փխ. խոսկումն ԹԳՅ, 63): Հմմտ Համբարձումյան, 1982, 66:

13. Անհարկի բազմակի նախամասնիկավորում. ներպարառութիւն (ՄՄ, ձեռ., № 1046, 90բ): Հմմտ. Աճառյան, 1951, 145 (այստեղ երևույթը կոչվում է բարդ նախամասնիկների թարգմանություն «հունարեն ոճով»):

14. Ավելորդ նախածանցմամբ արտաստվոր բառի կազմում՝ «հարագատ» (հայեցի) բառի գործածության փոխարեն. ստորանկանել (ԳԱ, I, էջ II, փխ. գտանել, ԳԱ, II, էջ II), նախասահմանել (ԽՔ, I, 15, փխ. լինել, եղանել ԽՔ, II, 21), ստորհակիլ (ԹԳՅ, 235, փխ. ի ստոր բերել ԹԳՅ, 235): Հմմտ. Համբարձումյան, 1982, 67:

15. Անջատական գրությամբ նախամասնիկների անհարկի, խորթ գործածություն. մակ յաւելիլ (ՄՄ, ձեռ., № 9068, 14բ, փխ. յաւելլուլ, ԱՄՇԱ, 46): Հմմտ. «Եվրոպա», 1848, 14, էջ 16, Ջարբհանայյան, 1878, 53, Համբարձումյան, 1982, 66:

16. Արտաստվոր վերջածանցավոր բառի կիրառություն հարագատ ձևի փոխարեն. մտաւորապէս (ԹԳՅ, 39, փխ. մտաւոր, ԹԳՅ, 39): Հմմտ. Համբարձումյան, 1982, 67:

17. Ցուցական նա դերանվան վերածում անձնականի՝ լատիներենի հետևողությամբ. հմմտ. լատ. անձն. դեր. 'ego - ես, du - դու, 3-րդ դեմք՝ չիք, ցուց. դեր. 'is, ea, id - նա (ար., իգ., չ.), hic, haec, hoc - նա (ար., իգ., չ.), ille, illa, illud - նա (ար., իգ., չ.)՝ չհաշված այլևայլ նրբությունները (ՖՌՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 18-19 (այստեղ նշվում է, որ «անհետևողականություն է հանդես բերվում դերանվան տարբեր տեսակների առանձնացման հարցում», թեև դա արդյունք է ոչ թե անհետևողականության, այլ լատիներենի «կույր հետևողության»):

18. Բայական սոսկածանցների օժտում բառի տարբերակման գործառույթյամբ. թոչիւմ (լատ. volo < volare) և թոնիւմ (լատ. salto < saltare) (ՈԵՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 60:

19. *Բառակազմական հիմքերի «միօրինականացման» նպատակով չ սուկածանցն ունեցող որոշ բայերի սահմանական ներկայի ձևավորում այդ նույն չ-ի բացթողմամբ*. ծանիմ (*փ/ս*. ճանաչեմ), յարիմ (*փ/ս*. յարնչիմ) (*ՖՈՒՔ*): *Հմմտ. Ջահուկյան, 1974, 22*:

20. *Բառիմաստային պատճենում («լատինարան բառաձևեր» իմաստի տեսակետից)*. աոփորձեցումն (*adprobatio «հաւանութիւն»*), բաւարարութիւն (*satisfactio «հատուցումն»*), ներսունապէս (*intime «ի սրտէ»*), վեհալուստր (*illustis «գերյարգոյ»*), փաղարկութիւն (*conjectura «կարծիք»*), հրապիրակ (*respublica «հանրապետութիւն»*), լրունակ (*summa «լրումն, ծագ»*): *Հմմտ. «Եվրոպա», 1848, 14, էջ 16, «Բազմավ եպ», 1879, 1, էջ 322, Ջարբհանայան, 1878, 53*:

21. *Բառակապակցության պատճենում (բառակապակցության դիմաց՝ բառակապակցություն)*. զգալ չարապէս (*male sentio*): *Հմմտ. Ջարբհանայան, 1878, 53*:

22. *Լատիներեն բառի փոխառություն*. լետեմ, լետես և այլն (*լատ. ledere «վնասեմ»*): *Հմմտ. «Բազմավեպ», 1873, 1, էջ 323, Ջարբհանայան, 1878, 53*:

23. *Բառաբարդման «հայկական» երևույթի չարաշահում լատիներենում նման երևույթի նվազ գոյության պատճառով («Կար ուրիշ բան մ'ալ, որ լատին լեզուին մէջ չեն գտած ու հայերենն ունէր, այսինքն՝ բառ բարդել. ուստի այս ազատութիւնս ալ որ ունեցան, ալ անանկ անշահ բարդութեանց ձեռք զարկին, որ բոլորովին խժալուր բաներ են»*, «Եվրոպա», 1848, 14, էջ 16):

24. *Բառիմաստի շփոթ՝ իմաստափոխության բաղարկության (կոնտամինացիայի) սկզբունքով*. արդ (*այլն՝ արդէն. «հիմա, այժմ, այժմվանից»*, *փ/ս*. վաղ իսկ - *լատ. dam, ֆրանս. gia, deja* և այլն): *Հմմտ. «Բազմավեպ», 1873, 1, էջ 323*:

զ) Չնաբանական հատկանիշներ. – Սրանք համեմատաբար մեծ թիվ են կազմում, որովհետև ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ լատիներենի և հայերենի (իբրև հնդեվրոպական ցեղակցության լեզուների) քերականական կառուցվածքի ամենահատկանշական և բնութագրիչ գծերը հանդես են գալիս ձևաբանության մեջ: Դա այդպես է՝ ա) որովհետև հնդեվրոպական լեզուների ուսումնասիրության բնագավառում ամենամեծ չափով ուշադրության է առնված լեզուների ձևաբանական համակարգը, բ) քանի որ տարբեր լեզուների քերականության ամենաձավալուն բաժինը ձևաբանությունն է, գ) ուստի և դրանք որոշակիորեն ազդում են լատինարան հայերենի ձևաբանական ընդօրինակմանը: Լատիներենի և հայերենի ձևաբանական համակարգերը ի հայտ են բերում առավելապես ցեղակցային ընդհանրություններ: Դրանց ավելանում են, ինչ խոսք, հայոց լեզվի կառուցվածքի տեսակետից, տիպաբանական նոր համապատասխանեցումներ:

Լատինարան հայերենի ձևաբանական հատկանիշները դրսևորվում են մեծ մասամբ գոյականի, ածականի, բայի և մակբայի զանազան կազմությունների դեպքում: Անհամեմատ մեծ է գոյականի և բայի բաժինը: Այստեղ առավել նշելի են հետևյալ հատկանիշները:

25. *Գոյականի թվի կարգի լրիվ արտահայտման ձգտումով անեզական բառի (pluralia tantum) եզականացում, վերածում եզակիի՝ վերցված ոչ միայն ինք-*

նին, այլն եզ. - հոգն. հակադրությամբ. նախերգան (փիւ. նախերգանք) (ՅՀՔ, 157), միտք ~ միտ (փիւ. միտք), կեանք ~ կեան (փիւ. կեանք) - ՅՀՔ, 89 (այլն՝ IGA, 2, էջ 6-7): Այլն՝ «Անուանք եզականք, որք եզերին ի մի միայն բաղաձայն, փոխարկին ի յոգնականս առադրութեամբ միոյ քէի, որգոն. միտ, միտք, մեղ, մեղք, աչ, աչք, հնձան, հնձանք» (ՅՀՔ, 130)⁶. արտևանուն (փիւ. արտևանունք): Հմմտ. «Եվրոպա», 1848, 14, էջ 16, «Բազմավեպ», 1873, 1, էջ 322, Աճառյան, 1951, 315, Ջահուկյան, 1974, 99, Համբարձումյան, 1982, 68:

26. Անհոգնական բառի «հոգնակիացում» (նախորդին հակառակ). կարք (փիւ. կար «կարողություն». օրինակ՝ «զկարս քոյնիս, այսինքն՝ զկար քո» («Բազմավեպ», 1873, 1, էջ 322):

27. Բառավերջում ր կիսաձայնն ունեցող գոյականների հոլովում և հոլովմամբ. բլուր ~ բլեր (փիւ. բլրոյ), ծաղր ~ ծաղեր (փիւ. ծաղու), մեղր ~ մեղեր (փիւ. մեղու)⁷:

28. Անունների (հատկապես գոյականի) սեռի առանձնացում ըստ քերականական որոշակի ցուցիչների⁸. ար. իք (լատ. hic), իգ. էք (լատ. haec), չ. օք (լատ. hoc), «հաւասար» իքէք (< (լատ. hichae?), «մակաւասար» իքէքօք (լատ. hichaeoch), «երկրայական» իք կամ էք («ի ներքո միտ նշանի»). աքու-ը (լատ.) իք է, նշանակում է և՛ արուն, և՛ էգը, արծիւ (լատ. aquila) էք, որ նշանակում է և՛ արուն, և՛ էգը, որովհետև ընդհանուր սեռով իգական է, իսկ դերանունների մեջ ար. իք, իգ. էք, չ. օք. «հասարակ» մերոք, «մակաւասար» էս, դու, իւրն (ՅՔՔ, 168-169, այլն 68-69, 72)⁹: Հմմտ. ՂՁՔ, 104-108, այլն ՅՔՔ, 68-69, 168-169:

⁶ Հովհ. Կոստանդնուպոլսեցին այս երևույթի վերաբերյալ ունի բանավիճային մոտեցում՝ գտնելով, որ այն գալիս է հայերենի հին շրջանից. «Գիտելի է երկրորդ, զի անուանք ոմանք այտորիկ տեսակի որպիսիք են մեղ, մեղի, շնորի, շնորիի, փառ, փառի, օրէն, օրինի, կամ, կամի, կեան, կենի, կարծին յոմանց թէ ոչ իցեն եզականապէս ի կիրարկանելիք, այլ միայն յոգնականապէս, բայց հաւաստի հակառակն, ի գրեանցն հայոց, մեղ, որգոն. մեղ ինչ որ գոյթ նոցա Յովհաննու, 15. շնորի, որգոն. օգնական և շնորի աշխարհի. ի Շարականս, 71. փառ, որգոն. Կանոնագլխի փառն, Տոնացոյցք, 1. կամ որգոն. եղև և ինձ. Ղուկասու, 1: Իսկ կեանն հաւաստի ի բաղադրութեանց, որգոն. կենակից, կենագործել և այլք: Բայց սոցին ևս եզակին գործիականն լինի իւ ըստ առաջնոյն, որգոն. մեղիւ, շնորիիւ, փառիւ, կենիւ, մնայ սակայն կամն, ի ներքոյ այտորիկ տեսակի, քանզի սաի կամաւ, այլ ոչ կամիւ» (ՅՀՔ, էջ 8-9):

⁷ Հայերենի համակարգում նկատվող լատինարան այս «արհեստականությունն» ունի իր հիմքերը հայերենի ավելի վաղ՝ հատկապես բուն գրաբարյան տարբերակում. հմմտ. բլուր > բլեր (Յ ն վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն է ա ն. Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832):

⁸ Այս մոտեցումը գալիս է Հովհաննես Երզնկացուց և Հովհաննես Ծործորեցուց: Վերջինս, օրինակ, զանազանում է լատիներենի ածականի համար ար. ուս (< լատ. us), իգ. ա (< լատ. a) և չ. ուս (< լատ. um), գոյականի համար՝ ար. իք, իգ. էք, չ. օք (լատ. hic, haec, hoc), տէ ս Յ ն վ հ ա ն ն է ա Մ ո ռ ծ ո ռ է գ ի. Համառոտ տեսութիւն քերականի, Լոս Անջելէս, 1984, էջ 198-199, 395-360:

⁹ Այստեղ հարկ կա բերելու Ս.Ավագյանի մի խիստ գնահատելի դիտողությունը՝ անունների սեռի նշանակիչ «իք, էք, օք» մասնիկների արժեքի վերաբերյալ. «Համառոտ հաւաքման» մեջ սեռատարբերակիչ մասնիկների մասին հիշյալ տեսությունը, անշուշտ, կարող էր ներթափանցել միջնադարի լատիներենի քերականություններից կամ հայերենի լատինատիպ նկարագրություններից: Եվ իրոք, Հովհաննես Քոնեցու քերականության մեջ, ինչպէս նաև սրա

29. *Բառի ուղիղ ձևը ոչ ճիշտ պատկերացնելու հետևանքով հայերենին առհասարակ անհարիր ձևի հիման վրա հոլովման տիպի խախտում*. ընկերի ~ ընկերուոջ (փխ. ընկեր ~ ընկերի) (ԿԳՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 36:

30. *Բառի ելակետային ձևը ճշգրիտ չընկալելու պատճառով, ըստ որում երկգրության հիման վրա տարբեր ձևերի հատկացումը տարբեր հոլովումների իբրև տարբեր բառերի*. լեռ ~ սեռ. լերան (փխ. լեառն ~ լերին), լեառ ~ սեռ. լերին (փխ. լեառն ~ լերին) (ԿԳՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 36:

31. *Անորոշ հայցականի «որոշակիացում» (այն է՝ զ-ի ավելացում): Հմմտ. «Ինչուան Սուրբ Գրոց մէջ ալ սկսեր էր Ոսկան վարդապետը ձեռք խառնել լատին թարգմանութեան յարմարեցնելու համար, ու ամէն անորոշ հայցականներուն վրա ալ զ գիրք եւելցրնել» («Բազմավեպ», 1873, 1, էջ 324):*

32. *Տրական հոլովի զուգահեռ արտահայտություն՝ «ձևավոր» և նախդիրով*. մարդ ~ ի մարդն և մարդում (ՅՔՔ, 171). բան ~ բանի, ի բան. բանք ~ բանից, ի բանս (ՅՀՔ, 4, այլև՝ *verbum ~ verbo, ad verbum, verba ~ verbis, ad verba - IGA, 3-4*):

33. *Նույն հոլովի բազմաձևություն լատիներենի համապատասխան ձևի բազմիմաստության «ձևավոր» արտահայտման նպատակով*. օրինակ՝ տրականի բուն և ց-ով ձևերը (ՖՌՔ): Ջահուկյան, 1974, 19:

34. *Գործիական հոլովի արտահայտությունը բացառականով, այն է՝ առաքական (լատ. *ablativus*)¹⁰. մարդ ~ ի մարդեն կամ մարդով (ՅՔՔ, 178): Այլև՝ գործիական (լատ. *ablativus instrumentalis* «գործիքի բացառական») (ՖՌՔ):*

35. *Ներգոյական հոլովի կազմում ըն (նի) կամ ն մասնիկով (նախդիրով), ըստ որում բաղաձայնից առաջ դրվում է ըն, իսկ ձայնավորից առաջ՝ ն (կցումով), զուգահեռ ի նախդրին*. ըն բանում, նաուր, ըն տեառն, նաստեղ և այլն, գոյն (բաղդատականի մասնիկը) ~ նիգոյն (ՅՔՔ, 167, ԿԳՔ, ՅՀՔ, 7, 15), այլև՝ միտ ~ ի մտի, ըն մտում (լատ. *in mente*), արին ~ յարեան, նարեան (լատ. *in sanguina*), (IGA, 18): Այլև՝ ՅԾՔ, 206, 208, 220, ԴԶՔ, 112, ՆԼՀԲ, 250: Հմմտ. «Եվրոպա», 1848, 14, էջ 16, × *Բազմավեպ*, 1873, 1, էջ 321, Աճառյան, 1951, 314-315, Ջահուկյան, 1974, 56, Համբարձումյան, 1982, 68:

36. *Երբեմն գործիական և բացառական հոլովների կազմում ըն (բ-ից առաջ ըմ) մասնիկով ձևի գործածություն*. բաղդատութին ~ ըմբաղդատութեամբ,

հետևությամբ հորինված Հովհաննես Օրծորեցու «Համառոտ տեսութիւն քերականի» երկում իք, էք, օք ներկայացված են իբրև լատիներենում անունների քերականական սեռը տարբերակող մասնիկներ, միաժամանակ հատուկ նշելով, որ դրանք հայերենում չեն դիտվում» (տե՛ս Յ ն վ հ ա ն ն է տ Ք ո ն է ց ի. Յաղագս քերականին, էջ 68-69): Տե՛ս նաև Յ ն վ հ ա ն ն է տ Եր գ ն կ ա ց ի. Հաւաքումն մեկնութեան քերականի, Լոս Անջելէս, 1983: Յ ն վ հ ա ն ն է տ Օ ն ր ծ ո թ ր է ց ի. Համառոտ տեսութիւն քերականի, Լոս Անջելէս, 1984, էջ 198-199:

¹⁰ Հայ. առաքական-ի առանձնացումը, ի դեպ, գալիս է Դիոնիսիոս Թրակացու մեկնիչներից՝ դրա տակ հասկանալով բացառական և գործիական հոլովների իմաստները, որն էլ ժառանգվում է Հովհաննես Քոնեցու կողմից, ընդ որում առաջնությունը տալով բացառական հոլովին:

բան ~ ըմբանէ, ոգի ~ նոգոյ, երկու ~ ներկուց, արտաքինք ~ նարտաքնոցն (ՅԾՔ, 208, 219, ԴԶՔ, 112, 114, 121, 115): Հմմտ. Համբարձումյան, 1982, 68:

37. Ներգոյական հոլովի արտահայտությունը բացառականով (իմա՝ լատ. *ablativus loci* «տեղի բացառական») (ՖՌՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 16:

38. Նախդիրով և աննախդիր հոգնակի հայցականի առանձնացում (գ-ով և առանց դրա). բան ~ զբան, զբանս, բանս (ՅՀՔ, 5):

39. Ածականի բաղդատական աստիճանի համար -գոյն մասնիկով ձևի հատկացում. մեծագոյն («ավելի մեծ»), լուսագոյն («ավելի լույս»): Հմմտ. Համբարձումյան, 1982, 69:

40. Ածականի գերադրական աստիճանի համար «ինքնատիպ» ձևի ստեղծում -գունեղ մասնիկով. լու ~ լուսագունեղ, գերազանց ~ գերազանցագունեղ, մեծ ~ մեծագունեղ, փարթամ ~ փարթամագունեղ: Հմմտ. «Եվրոպա», 1848, 14, էջ 16, «Բազմավեպ», 1873, 1, էջ 322, Ջարբխանայան, 1878, 53, Աճառյան, 1951, Ջահուկյան, 1974, Համբարձումյան, 1982, 69:

41. Դերանուններից նոյն, նորին, նմին և այլն ձևերի հատկացում նա-ին, իսկ նոյն-ի համար արհեստական նոյնոյ, նոյնում և այլն ձևերի հորինում (ԿԳՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 40:

42. Որոշ դերանունների համար սեռական հոլովի արհեստական ձևերի հատկացում. սա ~ սոքա, սայց, սոցայց (փիւ. յայսցանէ) – ՄՄ, ձեռ. -873, 25ա, -1646, 89ա, 366բ.: Այլն՝ նա ~ նոքա, նոցայցր (փիւ. նոցա), այս ~ այսք, այսցր (փիւ. այսց, այսոցիկ), ո ~ ոյք, ոյցր (փիւ. ոյց), իւր ~ իւրեանք, իւրեանցր (փիւ. իւրեանք) (ՄՄ, ձեռ. -1646, 89բ, -873, 260ա, ԴԶՔ, 73, ԿԳՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 40:

43. Հայերենում լատիներենի դերանունների սեռի տարբերակվածության ընդօրինակում արհեստական ձևերի հորինումով. սա ~ ներ սոջա (փիւ. սոցա) (ՄՄ, ձեռ. № 873, 256բ): Հմմտ. Աճառյան, 1951, 148:

44. Դերանվանական հոլովման մեջ գործիականի ձևի անտեսում լատիներենում նմանը չլինելու պատճառով (ՖՌՔ)¹¹: Հմմտ. Ջահուկյան, 1974, 19:

45. Բայի 4 լծորդությունների վերածում 3-ի՝ -ել, -ալ, -ուլ, այսինքն՝ իլ լծորդության հատկացում «կրավորականության» արտահայտմանը. սիրեմ, բառնամ, առնում, բայց սիրիմ («սիրվել»), բառնիմ («ելնել, բարձրանալ»), առնանիմ («առնվել») (ՅՔՔ, 176, ԿԳՔ, ՈԵՔ, 20-21, ՅՀՔ, 37, այլն՝ 63): Հմմտ. Ջահուկյան, 1974, 53, 76, 102 և այլն¹²:

46. Ու, ա խոնարհման բայերի վերածում բուն և «այլ կարգի խոնարհումների»՝ ու, ա/ե, ի գուգահեռությամբ. թողում ~ թող(ն)իմ, նան թողնում, բառնամ

¹¹ Այնուհանդերձ, Ռիվոլյան իր քերականության IV գլխում, դա է վկայում նաև Գ. Ջահուկյանը, նշում է գործիականի ամբ, մամբ, թեամբ, ալ, իւ, ով վերջավորությունները՝ համարժեք լատ. *in, cum, per* նախդիրներին (ՖՌՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 23:

¹² Առաջին անգամ Հովհաննես Քոնեցին է, որ հայերենի բայի լծորդությունները համարում է քերականական կարգ, «որոշում խոնարհման փոփոխություններում նրանց ունեցած առնչությունները»՝ հիմք ընդունելով սահմանական եղանակի («ցուցական կերպ») ներկայի եզակի առաջին դեմքի ձևերում ա, ե, ի, ու մասնիկների երևան գալը (հմմտ. ՅՔՔ, 90):

~ բառնիմ, զենում ~ զենիմ, հեղում ~ հեղեմ, յաւելում ~ յաւելեմ, առնում ~ առնիմ, լնում ~ լնիմ *և այլն* (ՖՌՔ, ԿԳՔ, ՈԵՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 23: Այնուհետև, ու/(ան)ե գուգահեռությամբ. հարցում ~ հարցանեմ (ՖՌՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 23:

47. Ե խոնարհման բայերի սահմանական կրավորաձև անկատարի «գործնական» (պրակտիկ) հիմքի¹³ հորինում՝ ե, ի ձևային գործադրումով. սիրել > սիրե (հմմտ. սիրեէի «սիրվեի», սիրեէիր, սիրիւր *և այլն*¹⁴, սիրե - էաք, սիրե - էիք, սիրե - էին) (ՅՀՔ, 40): Հմմտ. «Եվրոպա», 1848, 14, էջ 16, Աճառյան, 1951, 320, Ջահուկյան, 1974, 106, Համբարձումյան, 1982, 69-70:

48. Ա խոնարհման բայերի սահմանական կրավորական ներկայի կազմում ա խոնարհիչի վերածում ի խոնարհիչի. լուանամ ~ լուանիմ («լվացվում եմ») (ՅՀՔ, 46): Հմմտ. Աճառյան, 1951, 320, Ջահուկյան, 1974, 106:

49. Ա խոնարհման բայերի սահմանական կրավորական անկատարի կազմում ե խոնարհման բայերի ձևով. լուանայի ~ լուանէի («լվացվեի») (ՅՀՔ, 46): Հմմտ. Աճառյան, 1951, 320, Ջահուկյան, 1974, 106:

50. Ա խոնարհման բայերի սահմանական կրավորական «յարակատարի» կազմում յուրորինակ ցոյական հիմքով. լուանամ ~ լուանեցեալ եմ (փխ. լուացեալ եմ «լվացված եմ») (ՅՀՔ, 46-48): Հմմտ. Աճառյան, 1951, 320, Ջահուկյան, 1974, 106-107:

51. Ա խոնարհման բայերի սահմանական կրավորական «գերակատարի» կազմում տարօրինակ ցոյական հիմքով. լուանամ ~ լուանեցեալ էի (փխ. լուացեալ էի «լվացված էի») (ՅՀՔ, 46-48): Հմմտ. Աճառյան, 1951, 320, Ջահուկյան, 1974, 106-107:

52. Ա խոնարհման բայերի ըղձական (լատ. *optativus*) կրավորական կատարյալի կազմում, ըստ որում տարօրինակ ցոյական հիմքով. լուանամ ~ երանի թէ լուանեցեալ իցեմ (ՅՀՔ, 46-48): Հմմտ. Աճառյան, 1951, 320, Ջահուկյան, 1974, 106-108:

53. Ա խոնարհման բայերի ըղձական կրավորական «գերակատարի» (նույնը՝ «յարակատարի») կազմում տարօրինակ ցոյական հիմքով. լուանամ ~ երանի թէ լուանեցեալ իցէի (ՅՀՔ, 46-48): Հմմտ. Աճառյան, 1951, 320, Ջահուկյան, 1974, 106-108:

54. Ա խոնարհման բայերի ստորադասական («ստորակցական», լատ. *coniunctivus*) կրավորական կատարյալի կազմում, ընդ որում տարօրինակ ցոյական հիմքով. լուանամ ~ եթէ լուանեցեալ իցեմ (ՅՀՔ, 46-48): Հմմտ. Աճառյան, 1951, 320, Ջահուկյան, 1974, 106-108:

¹³ «Գործնական» ենք կոչում, ինչպես ընդունված է լատիներենի ներկայիս քերականություններում, միայն սովյալ ժամանակաձևի կազմությանը ծառայող հիմքը, ի տարբերություն, այսպես կոչված, «ընդհանրական» (ասենք՝ միաժամանակ ներկայի, անկատարի և այլն ժամանակների կազմությանը ծառայող) հիմքի:

¹⁴ Հմմտ. Ա. Մ է յ է. Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978:

55. Ա խոնարհման բայերի ստորադասական ապառնու կազմում տարօրինակ ցոյական հիմքով. լուանամ ~ եթէ լուանեցեալ եղեց (այլն՝ եթէ լուանեցեալ լիցիմ (ՅՀՔ, 46–48): Հմմտ. Աճառյան, 1951, 321, Ջահուկյան, 1974, 105–106:

56. Ա խոնարհման բայերի ստորադասական կրավորական «գերակատարի» (նույնը «յարակատարի») կազմում, ըստ որում տարօրինակ ցոյական հիմքով. լուանամ ~ եթէ լուանեցեալ իցէի (ՅՀՔ, 46–48): Հմմտ. Աճառյան, 1951, 320, Ջահուկյան, 1974, 106–108:

57. Ու խոնարհման բայերի ավելորդ սուկածանցի վերածնում՝ կրավորականի կազմության նպատակով. առնում ~ առնանիմ, լնում ~ լնան-, լնանեց- (փխ. լն ~ լց), կալնում ~ կալանիմ (այլն՝ կալանեցայ, կալանեցար և այլն), ինչպես նաև ուի կրավորական կազմում¹⁵. թողում ~ թողուիմ (ԿԳՔ, ՅՀՔ, 52–54, 100): Հմմտ. Աճառյան, 1951, 320, Ջահուկյան, 1974, 102, 105–107, 108:

58. Ու խոնարհման բայերի ըղձական ներգործական անկատարի կազմում, ըստ որում տարօրինակ «գործնական» հիմքով (լնուլ ~ լնից-). լնում ~ երանի թէ լնիցէի (ՅՀՔ, 51): Հմմտ. Աճառյան, 1951, 318, Ջահուկյան, 1974, 106:

59. Ու խոնարհման բայերի ստորադասական («ստորակցական») ներգործական անկատարի կազմում, ընդ որում տարօրինակ «գործնական» հիմքով (լնուլ ~ լնից-). լնում ~ եթէ լնիցէի (ՅՀՔ, 51): Հմմտ. Աճառյան, 1951, 321, Ջահուկյան, 1974, 106:

60. Սահմանական եղանակի ըմբռնում, ընդունում որպես ըղձական (լատ. *optativus*) և ստորադասական («ստորակցական», լատ. *coniunctivus*)՝ վերջիններս զանազանելով մի կողմից՝ աւշ թէ, մյուս կողմից՝ զի, վասն զի, որպես զի, իբրև, քանզի եղանակիչներով, իսկ հետագայում դրանք առանձնացվում են՝ կրելով մակար թէ, և յորժամ, մարտան, և իբրև, եթէ, երանի թէ կայուն եղանակիչները. (ՖՈՔ, ՅՔՔ, 81–83, 87, 177–178, ՅՀՔ, այլն՝ 58, 60): Հմմտ. Աճառյան, 1951, 316–317, Ջահուկյան, 1974, 21, 105:

61. Սահմանական եղանակի ներգործական անկատար անցյալի «ձևական» հակադրություն իր կրավորականին ե ~ է մասնիկների հակադրության հիմունքով. գովէի («գովում էի») ~ գովեի («գովվում էի»), այլն՝ գովեիր, գովիւր, գովեաք և այլն (ԿԳՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 21, 53:

62. Սահմանական եղանակի կրավորական «յարակատարի» կազմում տարօրինակ ցոյական հիմքի օգնությամբ. սիրեալ եմ ~ սիրեցեալ եմ («սիրված եմ») (ՅՀՔ, 40–42): Հմմտ. Աճառյան, 1951, 321, Ջահուկյան, 1974, 21, 107:

¹⁵ Ու խոնարհման բայերի անցյալ անկատար ժամանակի դեպքում այդ մասնիկը երբեմն վերածվում է ոչ մասնիկի, օրինակ՝ լնոյի (փխ. լնուի), զարթնոյի (փխ. զարթնուի) և այլն: Աճառյանը գտնում է, որ դա վերաբերում է նաև ներկա ժամանակին, որն անշուշտ ճիշտ չէ (հմմտ. Աճառյան, 1951, 318): Իսկ Գալանտը «-ում լծորդության բայերի համար տարբերում է ում տիպի կրավորական (բացի առնում բայից, որին հատկացնում է առնանիմ կրավորականը), ընդ որում անցյալ անկատարը կրավորական ներկայից տարբերելու համար կերտում է անցյալ անկատարի ընթեռնոյի (փխ. ընթեռնուի), ընթեռնոյի և այլ ձևերը» (Ջահուկյան, 1974, էջ 53):

63. Մահմանական եղանակի կրավորական «գերակատարի» կազմում տարորինակ ցոյական հիմքի օգնությամբ. սիրեալ էի ~ սիրեցեալ էի («սիրված էի»): ՖՌՔ, ՅՀՔ, 40–42): Հմմտ. Աճառյան, 1951, 321, Ջահուկյան, 1974, 24, 107:

64. Ըղձական եղանակի ներկայի և ապառնու նույնականացում. երանի թե սիրիցեմ (լատ. *utiam amem*) (ՅՀՔ, 38, այլև՝ IGA, 65): Հմմտ. Աճառյան, 1951, 317, Ջահուկյան, 1974, 24, 105:

65. Ըղձական եղանակի անկատարի և «գերակատարի» առանձնացում արհեստական դիմային վերջավորությունների և օժանդակ բայի նույնպիսի ձևերի միջոցով. երանի թե սիրիցեի, երանի թե սիրեալ իցեի (լատ. *utiam amaram, utiam amavissem*)¹⁶ (ՅՀՔ, 38, 38, այլև՝ IGA, 65): Հմմտ. «Եւրոպա», 1948, 14, 16, Աճառյան, 1951, 317, Ջահուկյան, 1974, 105:

66. Ըղձական եղանակի կրավորական անկատարի կազմում բայի «գործնական (պրակտիկ)» հիմքի իցե մասնիկի ներմուծումով. երանի թե սիրեի ~ երանի թե սիրիցեի (ՅՀՔ, 41): Հմմտ. Աճառյան, 1951, 320, Ջահուկյան, 1974, 105:

67. Ըղձական եղանակի կրավորական «գերակատարի» կազմում խոնարհվող բայի տարորինակ ցոյական հիմքով, օժանդակ բայի «ապառնի անցյալով». երանի թե սիրեալ իցեի, երանի թե սիրեցեալ իցեի (ՅՀՔ, 40–42): Հմմտ. Աճառյան, 1951, Ջահուկյան, 1974, 104, 107:

68. Ըղձական եղանակի կատարյալի և «գերակատարի» ձևային նույնականացում, ըստ որում դրվում է կից գրությամբ. երանի թե սիրեալիցեի (լատ. *utiam amaveram*) (ՅՀՔ, 39, այլև՝ IGA, 65): Հմմտ. Աճառյան, 1951, 317, Ջահուկյան, 1974, 105:

69. Ըղձական եղանակի կրավորական «յարակատարի» կազմում խոնարհվող բայի տարորինակ ցոյական հիմքով. երանի թե սիրեալ իցեմ, երանի թե սիրեցեալ իցեմ («երանի թե սիրված լինեմ»): (ՅՀՔ, 40–42): Հմմտ. Աճառյան, 1951, 321, Ջահուկյան, 1974, 104, 107:

70. Ստորադասական («ստորակցական») եղանակի անկատարի ու «գերակատարի» առանձնացում արհեստական դիմային վերջավորությունների և օժանդակ բայի նույնպիսի ձևերի միջոցով. եթե սիրիցեի, եթե սիրեալ իցեի (լատ. *si amarem, si amavissem*. ՅՀՔ, 39, այլև՝ IGA, 66): Հմմտ. Աճառյան, 1951, 317, Ջահուկյան, 1974, 105:

71. Ստորադասական եղանակի կրավորական անկատարի կազմում «գործնական» հիմքի մեջ իցե- մասնիկի ներմուծումով. եթե սիրեի ~ եթե սիրիցեի (լատ. *amarer*) (ՅՀՔ, 41): Հմմտ. Աճառյան, 1951, 317, Ջահուկյան, 1974, 106:

72. Ստորադասական եղանակի կրավորական ապառնու կազմում խոնարհվող բայի տարորինակ ցոյական հիմքով. սիրեալ եղեց (այլև՝ սիրեալ լիցեմ) ~ սիրեցեալ եղեց, այլև՝ սիրեցեալ լիցեմ (ՅՀՔ, 40–42): Հմմտ. Աճառյան, 1951, 321, Ջահուկյան, 1974, 104–105, 107:

¹⁶ Ըստ որում, լատիներենի հետևողությամբ տեղի է ունենում օժանդակ բայի և դիմային վերջավորությունների նույնականացում, որը գրության մեջ արտահայտվում է կից գրությամբ:

73. Ստորադասական եղանակի կատարյալի և «յարակատարի» նույնականացում. եթե սիրեալ իցեմ (լատ. *si amaverim*) (ՅՀՔ, 394, այլն՝ IGA, 66): Հմմտ. Աճառյան, 1951, 317, Ջահուկյան, 1974, 105:

74. Ստորադասական եղանակի կրավորական «յարակատարի» կազմում խոնարհվող բայի տարօրինակ ցոյական հիմքով. եթե սիրեալ իցեմ ~ եթե սիրեցեալ իցեմ (ՅՀՔ, 40–42): Հմմտ. Աճառյան, 1951, 321, Ջահուկյան, 1974, 104, 107:

75. Ստորադասական եղանակի կրավորական «գերակատարի» կազմում խոնարհվող բայի տարօրինակ ցոյական հիմքով. եթե սիրեալ իցեմ ~ եթե սիրեցեալ իցեի (ՅՀՔ, 40–42): Հմմտ. Աճառյան, 1951, 321, Ջահուկյան, 1974, 104, 107:

76. Հրամայական եղանակի ներգործական ապառնիի կազմում ներկայի երկրորդ ձևի հիման վրա, «առաջինը վերապահելով միայն ապառնիին». սիրեսցիր, սիրեսցես (այլն՝ սիրեսցուք, սիրեսցիքք. ՅՀՔ): Հմմտ. Աճառյան, 1951, 317, Ջահուկյան, 1974:

77. Ու խոնարհման բայերի հրամայականի կրավորական ապառնիի կազմում ու/ի փոփոխումով. լնանիջի՛ր (այլն՝ լնանիջի՛ք, մի՛ լնանիցի՛ք և այլն), առնանիջի՛ր (այլն՝ առնանիջի՛ք և այլն. ՅՀՔ): Հմմտ. Աճառյան, 1951, 321, Ջահուկյան, 1974:

78. «Ընդունելության» բաշխում 3-ի՝ ներկա, կատարյալ (նույնը՝ «յարակատար» ու «գերակատար») և ապառնի. սիրո՞ղ, սիրեալ, սիրելո՞ց (ՅՀՔ, 40): Հմմտ. Աճառյան, 1951, 317, Ջահուկյան, 1974, 107:

79. «Ընդունելության» կրավորական ներկայի կազմում տարօրինակ ցոյական հիմքով. սիրո՞ղ ~ սիրեցո՞ղ, լուանամ ~ լուանեցո՞ղ (ՅՀՔ, 40–42, 46–48): Հմմտ. Աճառյան, 1951, 317, Ջահուկյան, 1974, 107:

80. «Ընդունելության» կրավորական կատարյալի (նույնը՝ «յարակատարի» ու «գերակատարի») կազմում տարօրինակ ցոյական հիմքով. սիրեալ ~ սիրեցեալ գոլ, լուանամ ~ լուանեցեալ գոլ (ՅՀՔ, 40–42, 46–48): Հմմտ. Աճառյան, 1951, 321, Ջահուկյան, 1974, 107:

81. Աներևույթ եղանակի մեջ կատարյալ (նույնը՝ «յարակատար» ու «գերակատար») ժամանակաձևերի առանձնացում. սիրեմ ~ սիրեալ գոլ, ըստ որում ա խոնարհման բայերինը՝ ցոյական հիմքով՝ լուանամ ~ լուանեցեալ գոլ (ՅՀՔ, 40, 46–48): Հմմտ. Աճառյան, 1951, 317, Ջահուկյան, 1974, 106–107:

82. Աներևույթ եղանակի մեջ կատարյալի (նույնը՝ «յարակատար» ու «գերակատար») կազմում առհասարակ բայի ցոյական հիմքով. սիրեալ գոլ ~ սիրեցեալ գոլ, այլն՝ լուանեցեալ գոլ (ՅՀՔ, 40–42): Հմմտ. Աճառյան, 1951, 321, Ջահուկյան, 1974, 107:

83. Աներևույթ եղանակի մեջ ապառնի ժամանակաձևի առանձնացում. սիրեմ ~ սիրելոց գոլ (ՅՀՔ, 40, այլն՝ IGA, 66): Հմմտ. Աճառյան, 1951, 317, Ջահուկյան, 1974, 105:

84. Անորոշ դերբային (բայ)անվան արժեքի հատկացում (թարգմանվում է լատ. բայանվամբ). յետ յառնելոյ իմոյ (լատ. *post resurrectionem meam*. ՖՌՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 21:

85. Անորոշ դերբայի հոլովված (սեռական, տրական, գործիական և ներգոյական), այլն դրանց «նախդրիվ» ձևերի հատկացում ներգործական՝ լատ. *gerundium*-ին. սիրելո, սիրելով, առ ի սիրել, առ ի գործել (լատ. *ad operandum*), գործելով (լատ. *operando*), գործելոյ (լատ. *operando*), այլն՝ ընդ գործել, ի գործել (լատ. *cum operatur*), կարդալով (լատ. *clamando*), վասն կարդալոյ (լատ. *clamandi causa*), առ ի կարդալոյ (լատ. *ad clamando*) և ի կարդալոյ (լատ. *a clamando*) (ԿԳՔ, ՅՔՔ, 83, 178, ՖՌՔ), սիրելոյ (լատ. *amandi*), ի սիրել (լատ. *amandum*), սիրելով (լատ. *amandio*), ըն սիրելն, ի սիրելն (լատ. *nell'amare*. ՅՀՔ, 40, այլն՝ 67): Հմմտ. Աճառյան, 1951, 317, Ջահուկյան, 1974, 21, 42, 107:

86. Անորոշ դերբայի հոլովված (սեռական, տրական, գործիական և ներգոյական), այլն դրանց «նախդրիվ» ձևերի հատկացում կրավորական՝ լատ. *supium*-ին. ի սիրելոյ (լատ. *di esse amato, per esse amato*), ի սիրել (լատ. *ad esse amato*), սիրելով (լատ. *essendo amato*), այլն՝ ըն սիրելն (լատ. *in esse amato*) (ՅՔՔ, 83, 178, ՅՀՔ, 40, այլն՝ IGA, 71): Հմմտ. Աճառյան, 1951, 321, Ջահուկյան, 1974, 106-107:

87. Ենթակայական դերբայի (կամ ներկայի՝ -օղ մասնիկով) հատկացում ներգործական սեռի իմաստի արտահայտմանը¹⁷. սիրեմ ~ սիրօղ (ՖՌՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 20:

88. Անցյալ դերբայի (-եալ մասնիկով) հատկացում կրավորական սեռի իմաստի արտահայտմանը¹⁸. սիրեմ ~ սիրեալ (ՖՌՔ): Այլն -եց- մասնիկի ավելացում կրավորական սեռի իմաստի արտահայտման նպատակով. սիրեմ ~ սիրեցեալ, ընդ որում՝ ու խոնարհման բայերի դեպքում եղած -եց-, -ուց- հիմքակազմ տարրերի «արտաքսում»: Հմմտ. «Բազմավեպ» 1873, էջ 323, 1908, էջ 160, այլն՝ Ջահուկյան, 1974, 20:

89. Որոշ պակասավոր բայերի «լրացում» ներկայի ձևերում. ծանիմ, ծանիս և այլն (խոնարհված և՛ անկատարի, և՛ կատարյալի ձևերով) (ՅՀՔ, 107-108): Հմմտ. Ջահուկյան, 1974, 108:

90. Լինեմ, եղանիմ պակասավոր բայերի «լրացում» (իբրև ոչ պակասավոր, իրար լրացնող, այլև ինքնուրույն էական բայեր՝ հավասարարժեք եմ բային) (ՅՀՔ, 33-37): Հմմտ. Ջահուկյան, 1974, 108-109:

91. Գոմ բայի «լրացում»՝ իբրև էական բայ, ընդ որում հավասարեցում եմ, լինեմ, եղանիմ բայերին. գոմ ~ գոյի, գոյիր, գոյր, գոյաք, գոյիք, գոյին, այլն՝ գուցեմ, գուցես, գուցեմք, գուցեք, գուցեն, այլն՝ գուցեի, գուցեիր, գուցեր, գուցեաք,

¹⁷ Լատիներենի հետևողությամբ, ըստ Ռիվոլայի, -օղ-ով դերբայական ձև է կազմվում նաև չեզոք ու չեզոքի իմաստով անցողական բայերից (տե՛ս ՖՌՔ):

¹⁸ Տե՛ս նախորդ տողատակի ծանոթությունը: Ըստ Ռիվոլայի՝ անցյալ դերբայի -եալ մասնիկը եզակի և հոգնակի թվով դրված օժանդակ բայի հետ բաղադրվում է նույն ձևով, այսինքն՝ հոգնակի թվում ք հոգնակերտ չի ստանում (հմմտ. բնակեալ եմ, բնակեալ եմք և այլն): Հմմտ. Ջահուկյան, 1974, 23:

գուցեիք, գուցեին, *այլն*՝ գոյոյ, գոլոց, գոլոց գոլ *և այլն* (*հմմտ.* եմ//գոմ - *sum*, եղանեմ - *fio*, լինիմ - *existo*, *այլն*՝ գոյի - *eram*, *գուցեմ* - *utinam sim*, գուցեի - *utinam essem*, գոյոյ - *existen//qui sit*, գոլոց - *futuram* *և այլն*) (*ՅՀՔ, 33-37, 178, այլն՝ IGA, 55, 58-59*): *Հմմտ. Ջահուկյան, 1974, 104*:

92. *Անկանոն խոնարհման առնել բայի կրավորական կատարյալի հիմքի կազմության տարօրինակ «կանոնավորում»*՝ արարեաց (*փյ.* արար). առնել - արարեցեալեմ, արարեցեալեի, երանի թե // եթե արարեցեալիցեմ, արարեցեալ գոլ (*ՅՀՔ, 82-83*): *Հմմտ. Աճառյան, 1951, 322*:

93. *Անկանոն խոնարհման լսել բայի կատարյալի հիմքի կազմության «կանոնավորում»*՝ ըստ որում թե՛ ներգործական *և* թե՛ կրավորական կազմություններում՝ լսեաց (*փյ.* լու). լսել ~ լսեցի (*փյ.* լուայ), լսեցայ, լսեալ եմ, լսեցեալ եմ, լսեալ էի, լսեցեալ էի, երանի թե // եթե լսեալ իցեմ, երանի թե // եթե լսեցեալ իցեմ, լսեալ գոլ, լսեցեալ գոլ¹⁹ (*ՅՀՔ, 83-87*): *Հմմտ. Աճառյան, 1951, 322, Ջահուկյան, 1974, 108*:

94. *Անկանոն խոնարհման ճանաչեմ բայի կատարյալի հիմքի կազմության «կանոնավորում»*՝ ճանաչեաց (*փյ.* ծանեաց. *հմմտ. վերք*)²⁰. ճանաչել ~ ճանաչեցի, ճանաչեալ եմ, ճանաչեալ էի, ճանաչեցից, ճանաչեցայ, ճանաչեցեալ եմ, ճանաչեցեալ էի, ճանաչեցայց *և այլն* (*ՅՀՔ, 88-89*): *Հմմտ. Աճառյան, 1951, 322, Ջահուկյան, 1974, 108*:

95. *Անկանոն խոնարհման մեղանչեմ բայի կատարյալի հիմքի կազմության «կանոնավորում»*՝ մեղանչեաց (*փյ.* մեղայ). մեղանչեմ ~ մեղանչեցի, մեղանչեալ եմ, մեղանչեալ էի *և այլն* (*ՅՀՔ, 93-94*): *Հմմտ. Աճառյան, 1951, 319, Ջահուկյան, 1974, 108*:

96. *Անկանոն խոնարհման ունեմ բայի ներգործական կատարյալի հիմքի ստեղծում*՝ ունեաց, որից՝ ունեցայ, ունեալ, ունեալ եմ *և այլն*, *այլն կրավորականի դեպքում*՝ ունեցեալ, որից՝ ունեցեալ եմ, ունեցեալ էի *և այլն* (*ՅՀՔ, 103*): *Հմմտ. Աճառյան, 1951, 322, Ջահուկյան, 1974, 108*:

97. *Անկանոն խոնարհման ուտել բայի սահմանական կրավորական կատարյալի հիմքի կազմության տարօրինակ «կանոնավորում»*՝ ուտեց (*փյ.* կեր). ուտել ~ ուտեցայ, ուտեցար, ուտեցաւ, ուտեցեալ եմ, ուտեցեալ էի, երանի թե // եթե ուտեցեալ իցեմ, ուտեցեալ գոլ *և այլն* (*ՅՀՔ, 79*): *Հմմտ. Աճառյան, 1951, 322, Ջահուկյան, 1974, 108*:

98. *Անկանոն խոնարհման տալ բային զուգահեռ հարարմատ նոր բայի ստեղծում*, ըստ որում բայի տարօրինակ կատարյալի հիմքից (տալ - տուր, *փյ.* ետ). տրեմ, տրեի, տրեցի, տրեալ եմ, տրեցից, երանի թե // եթե տրիցեմ, *այլն*՝ տրիցեի, տրեալ իցեմ, տրեալ իցեի *և այլն*, տրիմ, տրեէի, տրեցայ, տրեցեալ եմ, տրեցեալ էի, տրեցայց, երանի թե // եթե տրիցեմ, *այլն*՝ տրիցեի, տրե-

¹⁹ *ՅՀՔ-ն երբեմն զուգահեռ բերում է ավանդական ձևեր*՝ եթե լսեալ եղեց (*զուգահեռ*՝ եթե լուեալ եղեց), լսեալ (*զուգահեռ* լուեալ) *և այլն* (*նույն տեղում, էջ 85*):

²⁰ *Աճառյանը նկատում է, որ «լատինարան հայերենի մեջ ճանաչեմ և ծանիմ, ունիմ և կալայ տարբեր բայեր են»* (*տե՛ս Աճառյան, 1951, էջ 319*):

ցեալ եւ, տրեցեալ իցէի և այլն (ՅՀՔ, 91–92, այլն՝ ՆԼՀԲ 514): Հմմտ. Աճառյան, 1951, 322, Ջահուկյան, 1974, 108:

99. Վերլուծական կազմություն ունեցող որոշ ժամանակաձևերի վերածում համադրականի, այսինքն՝ օժանդակ բայի կից գրություն (սահմանական, ընդական, ստորադասական եղանակների «յարակատար» և «գերակատար» ժամանակների դեպքում). սիրեալ եւ ~ սիրեալեւ, սիրեալ էի ~ սիրեալէի, երանի թէ սիրեալիցեւ, եթէ սիրեալիցեւ, այլն՝ սիրեալիցէի և այլն (ՅՀՔ, 38, այլն՝ IGA, 64):

100. Որոշ նախամասնիկների (բացի ըն-ից և ն-ից) օգտագործում իբրև նախդիր (համարժեք լատ. *in* և *sub* նախդիրներին)՝ ներ, ենթ (ՆԼՀԲ, 250, 514):

դ) Շարահյուսական հատկանիշներ.– Մրանք համեմատաբար քիչ են, քանի որ՝ ա) լեզվի կառուցվածքի մեջ շարահյուսական երևույթները չունեն այն մեծ ընդգրկումը, որն առկայացնում են, օրինակ, ձևաբանական երևույթները, բ) քերականական աշխատություններում լեզվական նման իրականություններին հատկացվել է պակաս կամ ոչ ամբողջական ուշադրություն, գ) հայերենի ուսումնասիրման պատմությունն առհասարակ ոչ մեծ չափով է անդրադառնում շարահյուսության նկարագրությանը, դ) լատինաբան հայերենի համակարգում ևս շարահյուսական երևույթները շատ քիչ են մատնանշվում: Այնուհանդերձ, կարելի է առանձնացնել լատինաբան հայերենին հատկանշական շարահյուսական երևույթներ: Դրանք հիմնականում վերաբերում են շարահյուսական միավորների համաձայնությանն ու շարադասությանը, եթե նկատի ենք ունենում հայ քերականագիտության ավանդական դրվածքը: Այնինչ լատինաբան հեղինակներից առաջինները, լիովին հետևելով հռոմեացի քերականների ավանդույթին, հայերենի համակարգում ևս ներմուծում են շարահյուսական ինչ-ինչ երևույթներ:

Դրանցից առաջինը Հովհաննես Քոնեցին է, որի քերականության մի առանձին բաժինը կազմում է շարահյուսությունը: Վերջինիս, ինչպես ավելորդ չէ նշել, քերականության մեջ նման երևույթները քննվում են բավականին մանրամասնորեն, ըստ կոնկրետ բաժինների և գլուխների: Ուսումնասիրության առարկա են բառակապակցությունն ու նախադասությունը՝ առնված իրենց տեսակներով, մասնավոր դրսևորումներով: Քոնեցին բավականին հետևողական է շարահյուսական երևույթների՝ ըստ լատիներենի օրինակի վերլուծության հարցերում: Ըստ անհրաժեշտության օգտագործված են Բարդուղիմեոս Մարադացու տրամաբանական-շարահյուսական այն դրույթները, որոնք ժամանակին ունեին հիմնականում տեսական արժեք: Բանն այն է, որ հետագա լատինաբան քերականներն այլևս այդպիսի ընդգրկումով, եթե չասենք հետագա խորացումով, չանդրադարձան շարահյուսությանը, ուստի այդ բնագավառն այնպես էլ չստացավ այն մանրամասնությունը, որն առանձնապես հատուկ է ձևաբանությանը:

Ստորև ներկայացնում ենք շարահյուսական տարբերակիչ հատկանիշները:

101. Նոր նախադրությունների («հոլովակերտների») առանձնացում՝ մակ, ըն, ն և այլն, ընդ որում ներգոյականը լատ. արևատիվուսի մի տեսակը դիտելու, բացառականի ի, յ նախդիրներից գործառապես առանձնացնելու և այլն նպատակով (ՖՌՔ, ՅՀՔ, 114 և այլն): Հմմտ. Աճառյան, 1951, 314–315, Չահուկյան, 1974, 23, 31, 71–73, 97–98, 148, 172, 258, Համբարձումյան, 1982, 68:

102. Նախադասության անդամների պարտադիր համաձայնություն թվով, այն է՝ ածականի (իմա՝ որոշչի) և գոյականի միջև համայնք խորհուրդք և արարմունք (ԽՔ, I, 13), իրօք երկրայնօք (ԹԳՅՀ, 64): Ընդ որում «անտեսելով հայոց լեզվի փաստերը», այլն «որ բոլոր գրուածքին մէջ տիրող եղանակն է, զգուելի դժնդակութիւն մը կուտայ սա դարերու գրութեանց» (ՅՀՔ, 160): Հմմտ. «Եվրոպա», 1848, 14, էջ 16, Չարբհանայան, 1878, 53, «Բազմավեպ», 1873, 1, էջ 321: Չահուկյան, 1951, 114, Համբարձումյան, 1982, 70 և այլն:

103. Դերբայների (ածականների նման) թվով պարտադիր համաձայնություն գոյականների հետ (գրեթե բոլոր դեպքերում՝ նախադաս կամ վերջադաս): Հմմտ. «Բազմավեպ», 1873, 1, էջ 323:

104. Բայի (իմա՝ ստորոգյալի) և անվան (գոյականի) պարտադիր համաձայնություն թվով. «ուղղականն ընդ բային պարտի համաձայնիլ ... ի թիւս. մարդ ընթանա (փիւ. յ-ով, մարդիք ընթանան» (ՅՔՔ, 200): Հմմտ. ՅՀՔ, 158 և այլն:

105. Անհամաձայնություն կամ բակառություն (ըստ Գալանոսի՝ բացաձայնութիւն, լատ. discordantio), որ ըստ Հոլովի սահմանման՝ «եզակի ձևով հոգնակի իմաստ ունեցող որոշ անունների հետ դրվում է հոգնակի թվով «բայ» (ձևակերպումը Գ. Չահուկյանի): Հմմտ. Չահուկյան, 1974, 38, այլն 114:

106. Նախադասությունների պարտադիր համաձայնություն թվով՝ իբրև «յարաբերականի ընդ նախընթացին». «Փափաքին հանդիսի կատարման սոցա, որք ի մահուան իւրեանց կենդանացան» (ՅՀՔ, 162): Հմմտ. ՖՌՔ, Աճառյան, 1951, Չահուկյան, 1974, 23, Համբարձումյան, 1982, 70 և այլն:

107. Ածականի (իմա՝ որոշչի) և գոյականի պարտադիր համաձայնություն հոլովով (գրեթե բոլոր դիրքերում՝ նախադաս կամ վերջադաս). ի շաւղէն ուղղականէ (ՅՊՁ, 245). ըն մարդում բեկանելում և մահկանացում (ԹԳՅՀ, 128–129): Հմմտ. ՅՀՔ, 160–162, «Եվրոպա», 1848, 14, էջ 16, «Բազմավեպ», 1873, 1, էջ 322–323, Չարբհանայան, 1878, 53, Աճառյան, 1951, 315, Չահուկյան, 1974, 114, Համբարձումյան, 1982, 70 և այլն:

108. Ածականի (իմա՝ որոշչի) և գոյականի պարտադիր համաձայնություն սեռով. «Այլ գոյացականքն և մակադրականքն պարտին համաձայնիլ ... ի սերս...: Ի սերս, զի եթէ գոյացականն է ի յարական սեռէն, նան մակադրականն պարտի լինել ի նոյն սեռէ» (ՅՔՔ, 192. նշվում են հատուկ շեղումներ այս կանոնից. նույն տեղում, 195–195): Իբրև սեռի նշույթ ոմանք գործածում են - ունի մասնիկը. «... ծննդեամբ սրբուհոյ կուսին», «սրբուհոյ աստուածածնին» (չի բացառվում սովորական՝ «ի սրբոյ կուսէն» համաձայնեցումը. ՅՀՔ, տե՛ս - նան ՈՒՔ, 42–43): Հմմտ. Չահուկյան, 1974, 84–85, 144, 168 և այլն:

109. *Բայի (իմա՛ ստորոգյալի) և անվան (իմա՛ ենթակայի) պարտադիր համաձայնություն դեմքով, ընդ որում գործադրվում է ժամանակի աշխարհաբարյան ձևավորումը. «... ամենայն անձնական բայ խնդրէ գուղղականն յառաջակոյս. հիպէս՝ ես ընթանամ, դու ընթանաս, նա ընթանա» (առանց 1-ի, ՅՔՔ, 200). «Ես կու ուսուցանեմ զՊետրոս. ես կու սիրեմ զիս. դու կու սիրես զքեզ» (ՅՔՔ, 199, այլն 200–205): Տե՛ս նաև ՅՀՔ, 158:*

110. *Բայի (իմա՛ ստորոգյալի) և անվան (իմա՛ ենթակայի) պարտադիր համաձայնություն դեմքով, ընդ որում գործադրվում է լատինաբան հոգնակիի ձև «մարդ ընթանա» (առանց 1-ի, մարդիք ընթանան. ՅՔՔ, 200): Տե՛ս նաև ՅՀՔ, 158 և այլն:*

111. *Շարահյուսական որոշակի կառույցի լրացում անունը (իմա՛ դերանունը) դրված է լինում տրական հոլովով (իմմտ. լատ. mihi, tibi և այլն). «...առընչականք անուանք, որ եղեալ լինին զկնի բառիս այս է. որպէս այս է ինձի հայր, այս է ինձի յորդի, այս է ինձի տէր, այս է ինձի ծառա» (առանց 1-ի. ՅՔՔ, 196–198) և այլն:*

112. *Ածականների համեմատության աստիճանների միօրինակացում նաև խնդրառությանը, այն է՝ բաղդատական աստիճանի ձևի խնդիրը դրվում է հայցական, իսկ գերադրականինը՝ սեռական և ներգոյական հոլովներով. «պարարտագոյն քան զառիժ, պարարտագունեղ առիժուց, այլն՝ ի յառիժս (ՅՀՔ): Ըստ Գ. Ջահուկյանի՝ «Այս խնդրառությունը տրվում է ավելի շատ լատիներենի նմանակությամբ, քան հայերենի փաստերի հիման վրա» (Ջահուկյան, 1974, 116. տե՛ս նաև 167–168, 203, 216 և այլն):*

113. *Հարց ու պատասխանի դրսևորում «ոչ միայն հոլովի, այլև յարմարութեամբ իրին»։ «Հարց. Ո՞ր է որդի. Պատասխան. Մարիամու» (ՅՀՔ, 164):*

114. *Շարահյուսական բաղադրիչների միջև քերականական (ձևական) կապի պահպանում՝ տեղիք տալով կայուն կապակցությունների, «դարձվածքների» և այլն։ «Ձքաղցրագունեղ հոգւոյդ քոյ սրբոյ գտցեն զմըխիթարութիւն» (ԹԳՅՀ, 245), «Ձամենայն վայելչութիւն մարմնական ի բաց ընկեցին» (նույն տեղում) և այլն։ Հմմտ. Աճառյան, 1951, 315, Համբարձումյան, 1982, 70 և այլն:*

115. *Նախադասության անդամների հատկանշական (տիպական կամ իդեալական) կառուցվածքի առանձնացում և ըստ այդմ՝ սերում։ Հմմտ. «Պօղոս լի նախանձու ճշմարտութեան հաւատոյն քրիստոնէականի, ըստ տուչութեան հոգւոյն սրբոյ միշտ ցանկայր իւրոյ ի Քրիստոս» (ՅՀՔ, 190): «Վարդապետք եկեղեցւոյ փարթամք իմաստութեամբ զկնի առաքելոց սրբոց յոյժ պարգաբար բացայայտեցին մեզ զբանս հաւատոյ ուղիղս» (ՄՄՔ, 448): Տե՛ս նաև Ջահուկյան, 1974, 119, 247 և այլն:*

116. *Շարադասական պատճենում՝ նախադասության անդամների հերթականության (սերման) նույնականությամբ։ «Եւ դարձեալ հնարաւոր եղև նամենասուրբ Երրորդութեանն», լատ. Praeterea fieri potuit in Trinitate (ԳՄՀ, II ա, 374) և այլն:*

117. *Լատիներեն բնագրի աղավաղում և աղճատում, այն է՝ «լատիներեն լեզուի ալ տեղեկութիւն չունենալով շատ բան ծուռ ու սխալ թարգմաներ են,*

ինչպես Հ. Յակոբ Վիլլոտ Յիսուսեան հայագետ քահանան ալ կ'ամբաստանէ»: Տե՛ս «Եվրոպա», 1848, 14, էջ 16:

118. Բայի (նաև համեմատական աստիճանով դրված ածականի) խնդրի մոտեցում և հարմարեցում (իմա՛յ պատճենում) «երոպական» լեզուների նման կամ նույնպիսի երևույթին. «Ոչ ուրուք մոլութեան երես զագրագոյն է ի ամին (փիս. քան զսա)»: Տե՛ս «Բազմավեպ», 1, էջ 323 և այլն:

Այսպիսով, լատինաբան հայերենի լեզվական բնութագրման համար առանձնացվում են այնպիսի հատկանիշներ, որոնք ընկած են եղել համապատասխան գրավոր հուշարձանների մեջ գործածված փաստերի հիմքում, տարբեր ժամանակներում այս կամ այն չափով, մոտեցմամբ և մտայնությամբ սահմանվել են նույնպիսի քերականություններում: Եվ դրանք էլ հիմք են հանդիսանում լատինաբան հայերենի պատմության ուսումնասիրության, ընդ որում ոչ միայն սույն, այլև հետագա, թերևս ավելի մանրամասն և ավելի ընդգրկուն աշխատանքների ձեռնամուխ լինելու համար:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աճառյան Հ. Հայոց լեզվի պատմություն, մ. I-II, Երևան, 1940-1951:

Զարբհանայյան Գ. Պատմություն հայերեն դպրութեան. Բ. Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878:

Համբարձումյան Վ. Գրաբարի լատինաստիպ նորամուծությունների հաղթահարումը XVIII դարում.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, № 2, էջ 63–72:

Զահուկյան Գ. Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974:

ԱՄՀԱ – Համառոտութիւն աստուածաբանութեան Մեծին Ալպերտի, լոյս ածեալ Մխիթարայ Սեբաստացոյ, Վենետիկ, 1715:

ԳԱ, I – Պետրոս Արագոնացի, Գիրք առաքինութեանց, Վենետիկ, 1721:

ԳԱ, II – Պետրոս Արագոնացի, Գիրք առաքինութեանց, Վենետիկ, 1772:

ԳԱԱ, II – Գիրգ աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրգ, Մարսել, 1683:

ԳՄԱ, I – Գիրք մտածական աղօթից, թարգմ. Պետրոս Թիֆլիսեցի, Մարսել, 1708:

ԳՄՀ, II – Կղէմէս Գալանոս. Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռոմայ, հ. 2, մաս Ա, Հռոմ, 1658:

ԴԶԲ – Դաւիթ Զէյթունցի. Մեկնութիւն քերականի, աշխատասիրությամբ Ե. Կ. Մելքոնյանի, Երևան, 1981:

ԹԳՅՀ – Գիրք Թոմայի Գեմբացոյ Յաղագս համահետևմանն, Հռոմ, 1674 (5-րդ տպագր. Մխ. Սեբաստացու. իմա՛յ ՄՄՏ):

ԹԳՅՆ – Թոմա Գեմբացի. Յաղագս նմանող լինելոյ Քրիստոսի: Տե՛ս ԹԳՅՀ VI:

ԽԲ, I – Դոմինիկոս Բահուրսեան. Խոկմունք քրիստոնէականք, Կ. Պոլիս, 1687:

ԽԲ, II – Դոմինիկոս Բոհուրսեան. Խոկմունք քրիստոնէականք, Վենետիկ, 1771:

ԿԳԲ – Կղէմէս Գալանոս. Քերական եւ տրամաբանական ներածութիւն, Հռոմ, 1645:

ՄՄ, ձեռ. № 873 – Ջիլբերթոսի Պոռետացոյ Վեցից սկզբանց գիրք, թարգմ. Ոսկան Երևանցի (Ժող., 1792, էջ 255ա-270բ):

ՄՄ, ձեռ. -1046 – Մաշտոց (ԺԵ, ԺԷ դդ.):

ՄՄ, ձեռ. -1646 – Ջիլբերթոս Պոռետացի. Վեցից սկզբանց գիրք, թարգմ. Պետրոս Արագոնացի և Հակ. Քոնեցի (Ժող., 14-րդ դ., էջ 87ա-95ա):

ՄՄ, ձեռ. № 9068 – Համառոտ հաւաքումն աստուածաբանական ճշմարտութեան Ալբերտի Մեծի:

ՄՄՔ – Մխիթար Սեբաստացի. Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազան սեռի, Վենետիկ, 1730:

ՄՖՄՄ – Միքայել Ֆերուրեան. Մանուանդականք առաքինութիւնք, Հռոմ, 1681:

IGA – Puritas haygica seu grammatica armenica, a Joanne Agop sagerdote armeno, Roma, 1675.

ՅԾՔ – Յովհաննէս Ծործորեցի. Համառոտ տեսութիւն քերականի, աշխատ. Լ. Խաչերեանի, Լոս Անջելէս, 1984:

ՅՀՔ – Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի. Չտութիւն հայկաբանութեան, կամ քերականութիւն հայկական, Հռոմ, 1674: Տէ՛ւ նան ՅԿՔ:

ՅՊԶ – Յովհաննէս Պոնա. Չեքրածութիւն յերկինս, թարգմ. Վարդ. Յունանեան, Հռոմ, 1674: Տէ՛ւ Բառարան գրքիս, էջ 3-81 (առանձին): Նույնը՝ ՅՊԶ, I:

ՅՔՔ – Յովհաննէս Քոնեցի. Յաղագս քերականին. բնագիրը հրատարակության պատրաստեց Լ. Ս. Խաչիկյանը, ներածությունը Լ. Ս. Խաչիկյանի և Ս. Ա. Ավագյանի, Երևան, 1977:

ՆԼՀՔ – Աստուածատուր Ներսէսովիչ. Բառգիրք լատինացոց և հայոց, Հռոմ, 1695:

ՈԵՔ – Քերականութեան գիրք համառոտիւք ծայրաքաղ արարեալ, հեղ. Ոսկան Երևանցի, Ամստերդամ, 1666:

ՏՌՔ – Ֆրանչիսկո Ռիվոլիս. Grammaticae Armenae, libri quattuor (լատին. եւ հայ. լեզ.), Միլան, 1624:

РАЗЛИЧИТЕЛЬНЫЕ ПРИЗНАКИ ЛАТИНИЗИРОВАННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

ВАЗГЕН АМБАРЦУМЯН

Р е з ю м е

Армянский язык в XIV–XVIII вв. испытал определенное влияние так называемого мертвого латинского языка, которое происходило в условиях искусственного языкового вмешательства миссионеров римской католической церкви и их местных последователей. Это влияние не было грамматически равномерным и функционально широким; вначале имело широкий охват, а в следующие два-три пятидесятилетия было слабым и незначительным, но в XVII в. снова значительным. Письменные памятники, дошедшие до нас на латинизированном армянском языке, характеризуются не только внешними обстоятельствами, но и своеобразными языковыми особенностями, которые по существу представляются различительными признаками. Последние характеризуют данное состояние языка не только в целом, но и на его разных уровнях. В настоящей статье выделяются более 110-и различительных признаков – в определенной последовательности; 11 из них являются фонологическими, 13 – лексикологическими, 76 – морфо-

логическими, а 18 – синтаксическими. По существу, морфологических признаков в 1,7 раза больше, чем остальных. Это значит, что латинотипные формы и словоформы широко распространены в письменных памятниках. Каждый различительный признак выделяется нами не только на основе данных предыдущих исследований в этой области, но и с использованием фактического материала разнородных письменных памятников, написанных представителями латинофильской армянской школы. Надо заметить, что выделение различительных признаков является весьма подробным и обстоятельным, вместе с тем имеет целью способствовать более обширному и подробному исследованию истории латинизированного армянского языка.

DIFFERENTIAL ATTRIBUTES OF LATINIZED ARMENIAN

VAZGEN HAMBARDZUMYAN

S u m m a r y

In the 14th-18th centuries Armenia was under the influence of the Latin language which was in the condition of the artificial linguistic intervention by the preachers of Catholic Church and their descendants. The influence was not homogenous and universal. Originally it had broader and more consistent authority which gradually declined and later on became more universal. Literary monuments written in Latinized Armenian are characterized not only by external circumstances, as well as with linguistic traits. The latter are specific attributes used at different levels and illustrating the linguistic condition and the structure. This study reflects on more than one hundred attributes with some classification. Eleven of them state phonetic attributes, thirteen convey verbal, seventy-six have morphological and eighteen–syntactical attributes. In fact, Latinized Armenian has the most expressions in morphological system of the Armenian language. Each attribute is distinguished not only with previous researchers as well as our observations on the data about the literary monuments. The separations of the attributes are rather broad and almost complete. They can become a base for the initiation of an extensive study of Latinized Armenian including the complete data about the corresponding literary monuments.